ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ
tatoulm@gmail.com

ՄՈՒՏՔ

Մեր նպատակն է յստակեցնել տնտեսական դիւանագիտութեան դերն այն սպառնալիքների կրճատման եւ վնասազերծման գործում, որոնք ոչ միայն վտանգում են առաջընթացն ու մարդկանց բարեկեցութիւնը, այլեւ կարող են տանել դէպի նոր հակամարտութիւնների հրահրումի, մեկուսացումի, ինչպէս նաեւ խաղաղութեան ու անվտանգութեան խաթարումների, զինուած ընդհարումների եւն.:

Որպէս կանոն, մեր կողմից ուսումնասիրուող սպառնալիքները կրում են ընդհանրական բնոյթ: Իհարկէ, կան նաեւ իւրաքանչիւր ժողովրդի եւ պետութեան առանձնայատկութիւններից բխող սպառնալիքներ կամ դրանց իւրայատուկ դրսեւորումներ: Այնուամենայնիւ, մեր նպատակն է առաջնորդուել ընդհանուրից՝ մասնաւոր սկզբունքով (համաշխարհային մտահոգութիւնից ու մտածողութիւնից դէպի տեղական լուծումներ եւ քայլեր), ինչի արդիւնաւէտ, յաջողակ օրինակները կարող են օգտակար լինել եւ կիրառուել տարբեր երկրներում: Հետեւաբար, մենք կը դիտարկենք համաշխարհային մարտահրաւէրները, շրջանային բնոյթի սպառնալիքներն ու ազգային առաջնահերթութիւնները, որոնք կը ներկայացուեն փոխկապակցուած: Նման ձեւով համընդհանուր սպառնալիքների ներկայացումը թոյլ կը տայ նաեւ ուրուագծել տնտեսական դիւանագիտութեան խնդիրներն ինչպէս տեղական մակարդակով՝ ի շահ տուեալ երկրի եւ ժողովրդի, այլեւ նախանշել գործակցութեան եզրերը տարբեր պետութիւնների եւ միջազգային կառոյցների ջանքերով:

Մինչեւ ԻԱ. դարը, միջազգային գործակցութիւնը կրել է դրուագային բնոյթ, բացառութեամբ Բ. Աշխարհամարտից յետոյ գործադրուած քայլերին՝ միաւորելու տարբեր պետութիւնների ջանքերը եւ ծաւալելու այսպէս կոչուած խորհրդաժողովային տնտեսական եւ քաղաքական դիւանագիտութիւն: Չնայած գործադրուող ջանքերին, քիչ չեն եղել նաեւ ձախո-

ղումները: Այսպէս օրինակ, Մարշալի յայտնի Ծրագրի իրագործումից շատ չանցած պարզ դարձաւ, որ դրա բացասական հետեւանքները որոշ չափով հակակշռում են օգուտները[1]: Սկսուեց «սառը պատերազմի» դարաշրջանը: Նման օրինակները եզակի չեն: Սպառնալիքների եւ վտանգների ընդհանուր բնոյթի գիտակցումը ժամանակ առ ժամանակ ստիպել է նոյն սեղանի շուրջ նստել եւ բանակցել երբեմն նոյն խնդրի լուծման վերաբերեալ տրամագծօրէն հակառակ մօտեցումներ ունեցող կողմերի: Արդիւնքում, արիւնալի պատերազմների պատմութիւն ունեցող երկրների ստուար հատուածի յաջողուել է, գոնէ տարածաշրջանային գործակցութեան եւ տնտեսական համարկման խմբաւորումների մակարդակով, ձեռք բերել երկարատեւ խաղաղութիւն, անվտանգութիւն եւ տնտեսական գործակցութիւն՝ ի շահ ժողովուրդների բարեկեցութեան: Ասուածի վառ օրինակներից է Հռոմի Դաշնագրի ստորագրումը 1957ին, որը հիմք դարձաւ ներկայիս Եւրամիութեան ստեղծման համար: Այսուամենայնիւ, նման օրինակները սահմանափակւում են տարածաշրջանային շահերով:

Ինչ վերաբերւում է համաշխարհային խնդիրներին, ապա դրանք շարունակաբար բարձրաձայնուել են ՄԱԿի եւ դրա հովանու ներքոյ գործող տարբեր կառոյցների ամբիոններից, համաժողովների ժամանակ, սակայն մեծ մասամբ դատապարտուել են ձախողման: Տնտեսական դիւանագիտութեան համաշխարհային ձախողման վառ օրինակներից է 1996ին Հռոմում հրաւիրուած գագաթաժողովը[2], որը նուիրուած էր աշխարհում աղքատութեան եւ սովի կրճատման խնդիրներին: Մասնակից բոլոր զարգացած եւ զարգացող երկրների ղեկավարների կողմից ձեռք բերուեց համատեղ պարտաւորութիւն՝ մինչեւ 2015 աղքատութիւնն աշխարհում կրճատել կիսով չափ: 2015ին պարզ դարձաւ, որ ոչ միայն չի յաջողուել կեանքի կոչել նման բարձր մակարդակում ձեռք բերուած համաձայնութիւնը, այլեւ աւելին՝ աղքատութիւնն աշխարհում կտրուկ աճ է արձանագրել, ինչը յանգեցրել է այլ սպառնալիքների աւելացման: Մենք այն համոզման ենք, որ աղքատութեան կրճատման համար աշխարհում առկայ աղբիւրներն աւելի քան բաւարար են նման խնդիր լուծելու համար: Խնդիրն աւելի շատ գործընթացները ճիշտ կազմակերպելու մէջ պէտք է փնտռել: Այլ խօսքով՝ բաւարար կերպով չի օգտագործուել նաեւ տնտեսական դիւանագիտութեան բազմադարեայ եւ ժամանակակից զինանոցը:

Բարեբախտաբար, նոր հազարամեակի մեկնարկին 191 երկրների յաջողուեց համաձայնութեան գալ Հազարամեակի Նպատակների ձեւա-

կերպման առումով, ինչը թոյլ տուեց ստորագրել եւ, ընդհանուր առմամբ, յաջողութեամբ կեանքի կոչել Հազարամեակի Հռչակագիրը[3]: Ի թիւս այլ երկրների, Հայաստանի Հանրապետութիւնը խոստացաւ մինչեւ 2015 իրագործել տեղայնացուած նպատակները.-

1. Ծայրայեղ աղքատութեան եւ սովի վերացում. 2. Տարրական ընդհանուր կրթութեան ապահովում. 3. Սեռոյթի (գենդերային) հաւասարութեան խթանում եւ կանանց լիազօրութիւնների ընդլայնում. 4. Երեխաների մահացութեան նուազեցում: 5. Մայրական առողջութեան բարելաւում. 6. Պայքար ՄԻԱՎ/ՁԻԱՀի, մալարիայի եւ այլ հիւանդութիւնների դէմ. 7. Շրջակայ միջավայրի պահպանման ապահովում. 8. Զարգացման նպատակով համաշխարհային գործակցութեան ձեւաւորում[4]:

Նատենք, որ 2015ին, հաշուի առնելով առաջ եկած համաշխարհային նոր մարտահրաւէրները, ՄԱԿն ընդունեց կայուն զարգացման աւելի մեծ թուով նպատակներ.

1. Ամէնուրեք վերացնել աղքատութիւնը. 2. Սովը, պարենային ապահովութեան ու գիւղատնտեսութիւն. 3. Առողջ կեանք. 4. Որակեալ կրթութիւն բոլորի համար, 5. Սեռոյթի հաւասարութեան. 6. Ջրի ու մաքրութեան պայմաններ. 7. Ուժանիւթի հասանելիութիւն. 8. Համապարփակ ու կայուն տնտեսական աճ, զբաղուածութիւն. 9. Դիմակայուն ենթակառուցուածքներ, արդիւնաբերութիւն, նորարարութիւն. 10. Կրճատել անհաւասարութիւնը երկրների ներսում եւ դրանց միջեւ. 11. Քաղաքները դարձնել անվտանգ եւ կայուն. 12. Ապահովել սպառման եւ արտադրութեան կայուն մոդէլներ. 13. Ձեռնարկել անյապաղ գործողութիւններ՝ կլիմայի փոփոխութեան եւ դրա ազդեցութիւնների դէմ. 14. Ապահովել ովկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանութիւնը եւ կայուն օգտագործումը՝ յանուն կայուն զարգացման. 15. Պահպանել, վերականգնել եւ խթանել ցամաքային կենսոլորտահամակարգի կայուն օգտագործումը, ապահովել անտառների կառավարումը, պայքարել անապատացման դէմ, դադարեցնել եւ շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանութեան կորուստը. 16. Խթանել խաղաղ եւ ներառական հասարակութիւնների կառուցումը՝ յանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարութիւնը, բոլոր մակարդակներում ստեղծել արդիւնաւէտ, հաշուետու եւ ներառական հաստատութիւններ. 17. Աշխուժացնել համաշխարհային գործընկերութիւնը՝ յանուն կայուն զարգացման[5]:

Դժուար չէ նկատել, որ Հազարամեակի Նպատակներն ամբողջովին կրկնւում են Կայուն Զարգացման Նպատակներում (ԿԶՆ), ինչը վկայում է որ, նախ, դրանք մնում են առաջնահերթութիւնների շարքում, միաժամանակ՝ չեն իրագործուել պետութիւնների կողմից եւ դրանց ուղղութեամբ աշխատանքներն անբաւարար են: Հետեւաբար՝ անարդիւնաւէտ են գործում կիրառուող կառուցակարգերը: Տնտեսական դիւանագիտութեան հա-

մար խիստ կարեւոր են յստակ ձեւակերպուած մարտահրաւէրները, որոնք ընդհանրական բնոյթ են կրում աշխարհով մէկ, ինչը դիւանագէտներին օգնում է ունենալ միմեանցից չտարբերուող օրակարգ, որն, իր հերթին, հնարաւորութիւն է ընձեռում համագործակցել ուսանելի փորձը փոխանակելու եւ համատեղ ուժերով պայքարելու բազմաթիւ աղէտների եւ խնդիրների դէմ: Այն նաեւ հնարաւորութիւն է տալիս աւելի արդիւնաւէտ օգտագործել առկայ մարդկային, բնական, արտադրական եւ ֆինանսական աղբիւրները՝ համաշխարհային անվտանգութեան ապահովման նպատակով:

Ստեղծուած պայմաններում տնտեսական դիւանագիտութիւնը կարեւոր գործիք է, որը կարելի է օգտագործել պետութիւնների կողմից արտաքին քաղաքականութեան իրականացման համար. այդ քաղաքականութիւնը ձեւաւորւում է հենց դրա կողմից, այդ իսկ պատճառով: Մարտահրաւէրների յաղթահարման գործում տնտեսական դիւանագիտութիւնը կարող է եւ լինել համեմատաբար աւելի «ցածր» քաղաքականութեան մակարդակում՝ երկու կամ միքանի երկրների միջեւ մերձեցման առաջին փուլը, հիմք դնելով յետագայ գործակցութեան եւ իւրաքանչիւր կողմի համար անհատապէս զարգացնելով տնտեսական մրցունակութիւնը: Մասնաւորապէս, պետութիւնը կարող է իր ազդեցութիւնը գործադրել սեփական շահերն առաջ տանելու՝ սկզբում տարածաշրջանում, ապա՝ միջազգային համակարգում, քանի որ տնտեսական դիւանագիտութիւնը զարգացող կամ զարգացած պետութիւնների հետ յարաբերութիւններում սեփական ներուժի դրսեւորման, խոցելի կողմերի յաղթահարման ամենայարմար միջոցներից մէկն է:

Ներկայումս արտաքին առեւտուրը, մրցակցային առաւելութիւնների իրացումը տարբեր տնտեսական դաշինքների միջոցով կարեւոր են տնտեսական դիւանագիտութեան իրականացման համար, բայց բաւարար չեն պատերազմներ կանխելու, ճգնաժամեր կամ հակամարտութիւններ սանձելու համար: Փոխարէնը՝ պետութիւնները շարունակում են հանդէս գալ որպէս խիստ բանական եւ ինքնիշխան դերակատարներ՝ նոյնիսկ իրենց քաղաքական, տնտեսական կամ ռազմական դաշինքների ներսում, որի արդիւնքում ժամանակ առ ժամանակ շահերի բախումներ են առաջանում, երբ խմբաւորումների ներսում առաջ են գալիս ինքնիշխանութեան աւելի բարձր պահանջներ: Ասուածի վառ օրինակներից է Եւրամիութեան հիմնադիր անդամներից Միացեալ Թագաւորութեան պահանջներն ու շահերի շարունակական բախումները միւս 27 երկրների հետ, ինչն ի վերջոյ, յանգեցրեց յայտնի Brexit անուանումը ստացած քաղաքատնտեսական

հանգուցալուծման[6]: Մէկ այլ օրինակ է բրիտանա-իսպանական հակամարտութիւնը, երբ առկայ դաշինքներն այդպէս էլ չնպաստեցին իրենց յարաբերութիւնների ամրապնդմանը ԵՄում երկկողմ արտաքին առեւտրի, բազմակողմ առեւտրային համաձայնագրերի միջոցով:

Ի վերջոյ, տնտեսական դիւանագիտութիւնն ինքնին չի կանխորոշում պետութեան անվտանգութիւնը: Ընդհակառակը, տնտեսական դիւանագիտութիւնը անվտանգութեան զգացողութեան օրինակ է եւ այն ծառայում է պետութեան անվտանգութեան ապահովման գործին: Աւելին՝ հակամարտութեան իրավիճակներում տնտեսական դիւանագիտութիւնն աւելի մեծ դեր ունի տնտեսական շահերով միջնորդուած «ճնշում» բանեցնելու մէջ՝ որպէս սպառնալիք ակնկալող կողմի գործիք եւ ինքնուրոյն չի գործում, որպէսզի կարողանայ փոխել աւելի բարձր մակարդակում իրականացուող քաղաքական յարաբերութիւնները: Նման գործիքների օրինակ է գազային դիեանագիտութիւնը:

ՀՀՆ ԵՒ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կարեւոր է, որ պետութիւններն այս ամենը հաշուի առնեն ԿԶՆի իրագործման տեսանկիւնից: Հայաստանի պարագայում հարկ է նկատել, որ դեռեւս անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում ժամանակակից մարտահրաւէրներին եւ դրանց յաղթահարման գործում պետութեան ներքին դիւանագիտութեան դերին: Այդ մարտահրաւէրներից ամենաէական՝ ծայրայեղ աղքատութեան եւ սովի վերացման ուղղութեամբ ՀՀՆ հիմնականում կատարել է սահմանուած ցուցանիշերի միայն կէսը, իսկ մնացածը դեռ պէտք է կատարուի: 2000ականներին ծայրայեղ աղքատութիւնն ու սովն էապէս նուազել են, սակայն աղքատութեան մակարդակը դեռ բարձր է: Ըստ Ազգային Զեկոյցի, 2004ից սկսած, թերսնուած (ծայրայեղ աղքատ) անձանց թիւը կրճատուել է 1.6 անգամ՝ կազմելով է 2.7% 2013ին[7]: Ներկայումս բնակչութեան գրեթէ մէկ երրորդը շարունակում է մնալ աղքատ: Աղքատներ են համարւում օրական 3.2 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցողները, իսկ ծայրայեղ աղքատներ՝ օրը 1.9 ԱՄՆ դոլարից պակաս ունեցողները: Միաժամանակ, 2000ին սկսած թերսնուած եւ թերաճ մինչեւ հինգ տարեկան երեխաների թիւն աճել է, իսկ 2010ից նրանց 5%ը թերքաշութիւն ունի, 19%ը՝ թերաճ է: Մտահոգիչ է այն փաստը, որ երեխաների աղքատութեան մակարդակը գերազանցում է ազգային միջին ցուցանիշը 5.3 տոկոսով (2008ի համեմատ՝ 25%): Արդիւնաւէտ

զբաղուածութեան եւ պատշաճ աշխատանքի ապահովման տուեալները եւս բարուօք չեն. թէեւ 2005-14՝ երկրում գործազրկութեան մակարդակը 31.2%ից իջել է 17.6%ի, աշխատանքային աղբիւրների մօտ 40%ը տնտեսապէս ոչ-գործուն է, իսկ 25-29 տարեկանների 40.4%ը եւ 15-24 տարեկանների 37.2%ը դպրոցում կամ այլ ուսումնական հաստատութիւններում չեն սովորում եւ աշխատանք չունեն[8]: 2020ին երկրի զբաղուածների մօտ մէկ երրորդը աղքատ է, միջին խաւի օրը 4 ԱՄՆ դոլարից աւելի սպառողների տեսակարար կշիռը բնակչութեան մէկ երրորդից աւելին է, որն արդիւնք է տնտեսութեան անբաւարար մրցունակութեան, ինչն, իր հերթին, կարիք ունի արհեստավար տնտեսական դիւանագիտութեան գործիքակազմի կիրառման: Դրա մասին է վկայում նաեւ աղքատութեան կրճատմանը միտուած համադրելի վիճակում գտնուող երկրների, օրինակ՝ Ղազախստանի, Բելառուսի եւ Վրաստանի փորձը:

2020ի դրութեամբ ՀՀում աղքատ է 700,000 մարդ: Նրանք ամսական ծախսում են ամենաշատը 42 հազար դրամ: Ծայրայեղ աղքատները 30 հազար են, նրանց ամսական ծախսը 24 հազար դրամ է: 2019ի վերջին աղքատութեան մակարդակը կազմել է 23.5%՝ նախորդ տարուայ համեմատ արձանագրելով աղքատութեան մակարդակի 2.2% նուազում: ՀՀում աղքատ է ամէն չորրորդը: Միջին հանրապետական ցուցանիշից աւելի բարձր աղքատութեան պատկեր է մարզերից 5ում, 42% աղքատութեամբ Շիրակը տարիներ շարունակ առաջին տեղում է: Տարիքային խմբերից երեխաներն ամենաաղքատն են, բազմազաւակ ընտանիքները նոյնպէս: Եթէ ծայրայեղ աղքատները նպաստ չստանան, ծայրայեղ աղքատութիւնը 1%ից կը դառնայ 19%: «*Աղքատութեան յաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 63,2 միլիարդ դրամ*»: Իսկ ծայրայեղ աղքատութիւնը հնարաւոր է վերացնել մէկ միլիարդ դրամով: Հարցուածների կէսից աւելին չի կարող տունը տաքացնել կամ օրումէջ մսով կերակուր ուտել[9]:

Աղքատութեան յաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացումն իրականում ձախողուել է ոչ միայն ներքին, այնպէս էլ արտաքին տնտեսական ցնցումներից: Միաժամանակ, ըստ Ազգային Զեկոյցի, կառավարութեան թիրախաւորած նպատակները թերի են իրականացուել ոչ միայն արտաքին ցնցումներով՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամ, Ռուսաստանում տնտեսական անկում, տնտեսական եւ ընկերային հետեւանքներ, այլեւ ցածր արդիւնաւէտութեամբ կառավարման համակարգի առկայութեամբ:

Կարելի է արձանագրել, որ 2000ականներին գրանցուած տնտեսական աճն իր բնոյթով չի եղել ներառական, հետեւաբար, որեւէ կերպ չի ծառայել աղքատների շահերին, ինչի մասին են վկայում փաստերն առ այն, որ երկրի բնակչութեան աւելի քան մէկ երրորդը դեռեւս աղքատ է, չնայած բնակչութեան ընդհանուր սպառումն աճել է 0.9%ով, աղքատների սպառումը նուազել է 0.5%ով, գբաղուածութեան մակարդակն աւելի ցածր է աղքատների շրջանում, իսկ պաշտօնական վիճակագրութեան համաձայն, մինչեւ 2015 զգալիօրէն նուազել է նաեւ բնակչութեան ամենաաղքատ խմբի մասնաբաժինն ազգային սպառման մէջ, ինչը վկայում է բնակչութեան խմբերի միջեւ տնտեսական աճի անհաւասար բաշխման մասին: Վերջապէս, տնտեսական դժուարութիւնների պատճառով կրթական համակարգում աղքատների ընդգրկուածութեան մակարդակն աւելի ցածր է: Չնայած այն հանգամանքին, որ ընկերային ծրագրերը որոշակիօրէն միտուած են եղել աղքատութեան եւ յատկապէս ծայրայեղ աղքատութեան դէմ ուղղուած պայքարին, սակայն դրանք բաւարար չեն եղել աղքատութեան կրճատման կայուն ընթացքն ապահովելու համար: Ներկայիս կարեւոր խնդիրներից է գրանցել ներառական տնտեսական աճ, ինչը կը բարելաւի բնակչութեան ընկերային պայմանները եւ կը կրճատի աղքատութեան բարձր մակարդակը[10]:

Անհանգստացնող եւ ահազանգող նշան է դարձել այն իրողութիւնը, որ 2000ից իվեր արձանագրուել է թերսնուած եւ թերաճ մինչեւ հինգ տարեկան երեխաների մասնաբաժնի աճ: Մինչեւ հինգ տարեկան երեխաները կազմում են հասարակութեան առաւել անապահով եւ խոցելի խմբերից մէկը, իսկ նրանց հետ կապուած խնդիրները պէտք է առաջնահերթութիւն ստանան աղքատութեան կրճատմանն ուղղուած պայքարում: Բացի այդ, կարեւոր է, որ ՀՀում առաջնահերթութիւնը տրուի պարենային ապահովութեանը եւ ապահովուի բոլորի համար սննդի հասանելիութիւնը[11]: Միւս կողմից, աղքատութեան կրճատման, կրթութեան, առողջապահութեան, ինչպէս նաեւ սեռոյթի եւ ընկերային հաւասարութեան ոլորտներում իրագործուող բոլոր ծրագրերի ֆինանսաւորման ապահովումը ուղղակիօրէն պայմանաւորուած է երկրի տնտեսական առաջընթացից: Վերջին տարիներին օտարերկրեայ ուղղակի ներդրումների, արտադրութեան ծաւալների, արտահանման եւ այլ տնտեսական ցուցանիշերի վատթարացումը հանգեցրել է պետական եկամուտների նուազեցմանը, հետեւաբար՝ ընկերային ծրագրերի համար նախատեսուած նիւթական միջոցների նուազման:

Ազգային Զեկոյցի համաձայն, համընդհանուր տարրական կրթութեան ապահովման գծով ՀՀն կատարել է սահմանուած հինգ ցուցանիշերից մէկը: Ընդհանուր առմամբ, ՀՀում կրթական համակարգում ընդգրկուածութեան մասնաբաժինը բարձր է, ընդ որում՝ գրեթէ ամբողջ բնակչութիւնը գրագէտ է եւ ստացել է որոշակի մակարդակի կրթութիւն: Կրթութիւնը հաւասարապէս հասանելի է ինչպէս տղաների, այնպէս էլ աղջիկների համար, թէեւ աւագ դպրոցում եւ բուհերում սովորող աղջիկների տոկոսն աւելի բարձր է: Կրճատուել է բուհերում համախառն ընդգրկուածութեան ցուցանիշի տարբերութիւնն աղքատների եւ ոչ-աղքատների միջեւ: 2005-13՝ աղքատների ընդգրկուածութիւնը՝ իբրեւ որպէս ոչ-աղքատ բնակչութեան տոկոս, 26%ից հասել է 51%, սակայն չեն կատարուել տարրական եւ աւագ դպրոցներում ընդգրկուածութեան մասնաբաժնի եւ պետական ամավարկից համապատասխան յատկացումների ցուցանիշերը: 2014ին պետական ֆինանսաւորման մակարդակը կազմել է 2.4%, որն աւելի ցածր է քան 2000ին գրանցուած մակարդակը[12]: Դպրոցներում, մասնաւորապէս աւագ դպրոցներում ընդգրկուածութիւնը կրճատուել է, իսկ դուրս մնացած աշակերտների տոկոսն աճել է: Բացի այդ, 2010-13՝ աւագ դպրոցներում ընդգրկուածութեան մակարդակը 84.4%ից նուազել է 72.4%ի[13]:

Վերջին տարիների զարգացումները վկայում են, որ տասներկուամեայ կրթական համակարգը ոչ միայն չի կայացել դասագրքերի, ծրագրերի որակի եւ գիտելիք հաղորդողների որոշ հատուածի պատրաստուածութեան տեսանկիւնից, այլեւ ընկերային արդարութեան սկզբունքի եւ հասարակութեան բեւեռացուածութեան հետեւանքով անապահով ընտանիքների երեխաների համար որակեալ կրթութեան մատչելիութեան տեսանկիւններից: Եթէ միջին եւ միջինից բարձր խաւի ընտանիքները կարող են իրենց թոյլ տալ արտաժամեայ մասնաւոր պարապմունքների միջոցով լրացուցիչ գիտելիքների տրամադրումը երեխաներին, ապա բնակչութեան մէկ երրորդից աւելին կազմող աղքատ ընտանիքների երեխաները գործնականում զրկուած են այդ հնարաւորութիւնից: Սա, իր հերթին, բացասաբար է անդրադառնում այդ երեխաների բուհ ընդունուելու իրական հնարաւորութիւնների վրայ թէ՛ գիտելիքների որակի՝ թէ՛ ուսման վարձի վճարման անհնարինութեան տեսանկիւններից: Արդիւնքում՝ բնակչութեան առաւել հարուստ խմբերի ընդգրկուածութեան ցուցանիշը բուհերում եռապատիկ աւելին է ամենաաղքատ խմբերի համեմատ: Զարմանալի չէ, այս իմաստով, որ դպրոցներից դուրս մնացածների մէջ գերակշռում են

աղքատ ընտանիքների երեխաները: Ի տարբերութիւն Ռուսաստանի, Բելառուսի եւ մի շարք այլ երկրների, ՀՀում չի կիրառւում աղքատ ընտանիքների երեխաների ուսման պետական նպաստաւորումը կամ պարտադիր 12ամեայ հանրակրթութիւնը բոլորի համար:

Տնտեսական դիւանագիտութեան խողովակներով եւ միջոցներով միջազգային առաջաւոր փորձի տեղայնացման անարդիւնաւէտութեան հետեւանք է նաեւ այն, որ մինչ օրս չեն իրագործուել նաեւ սեռոյթի հաւասարութեան եւ կանանց լիազօրութիւնների ընդլայնման նպատակները: Աշխատանքի վարձատրութեան հարցում սեռոյթի խտրականութիւնը պահպանւում է, որի փաստն այն է որ կանանց զբաղուածութեան մակարդակը կազմում է մօտ 40%, տղամարդկանց զբաղուածութիւնը 60%ից աւելին է[14]: Բացի այդ, չնայած սեռոյթի հաւասարութիւնն ամրագրուած է ՀՀ սահմանադրութեամբ եւ գործող օրէնքներով, կանայք հազուադէպ են ընդգրկւում որոշումների կայացման գործընթացներում՝ հանրային կեանքի բոլոր ոլորտներում: Բացառութիւն է, թերեւս, ՀՀ Ազգային Ժողովում կանանց ներգրաւուածութիւնը, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններում այն տատանւում է 2%ի սահմաններում: Փորձագէտների վկայութեամբ, նման իրավիճակի հիմքում քիչ չեն պատմական կամ մշակութային գործօններ, որոնց յաղթահարումը ենթադրում է պետութեան, գործարար շրջանակների եւ քաղաքացիական հանրութեան համաձայնեցուած քայլեր եւ միջոցառումներ: Ներքին տնտեսական դիւանագիտութեան դերն այս հարցում կարող է դրսեւորուել, մասնաւորապէս, ՀՀ աշխատանքի եւ ընկերային հարցերի նախարարութեան, գործարար շրջանակների հետ բանակցութիւններ՝ աշխատանքի տեղաւորման հարցում այլ հաւասար պայմանների դէպքում կանանց եւ աղջիկներին որոշակի նախապատուութիւն տալու ծրագրեր մշակելու, գործատուներին՝ աշխատանքի եւ վարձատրութեան աւելի բարենպաստ պայմաններ ձեւաւորելու եւ այլ հարցերի առնչութեամբ: Աւելին, աշխուժ ներքին տնտեսական դիւանագիտութեան, միջազգային կառոյցների հետ համագործակցութեան արդիւնքում ՀՀ ազգային ժողովին կարելի ներկայացնել օրէնսդրական նախաձեռնութիւններ՝ յիշեալ հարցերի օրէնսդրական կարգաւորման ուղղութեամբ:

ՀՀում մտահոգիչ է եւ նորածինների սեռերի անհամամասնութիւնը.

Հայաստանում նորածինների սեռերի անհաւասարութեան աճ է գրանցուել անկախութեան ձեռքբերումից իվեր եւ, ըստ առկայ գնահատումների, 2011

թուականին կազմում էր 114 տղայ նորածին՝ իւրաքանչիւր 100 աղջիկ նորածնի հաշուով: Հայաստանում ակներեւ է նախածննդեան փուլում սեռի ընտրութեան հետեւեալ երեք նախապայմանների առկայութիւնը՝ հայաստանեան հասարակութեան հայրիշխանական կառուցուածքը, որը միտուած է տղաներին գերադասելու աղջիկներից, նախածննդեան տեխնոլոգիաների հասանելիութիւնը, որը յղիութեան արհեստական ընդհատման հնարաւորութեան հետ միասին ապագայ ծնողներին թոյլ է տալիս խուսափել ոչ-ցանկալի աղջիկ ունենալուց եւ ծնելիութեան ցածր մակարդակով պայմանաւորուած՝ զոյգերի վերարտադրողական նպատակների փոփոխումը[15]:

Բացի այդ, սեռոյթի հիմքով բռնութիւնը նաեւ պայամանաւորուած է հասարակութիւնում կանանց զբաղեցրած ցածր դիրքով, ինչպէս նաեւ նրանց տնտեսական կախուածութեամբ: ՀՀում ֆիզիկական եւ հոգեբանական բռնութեան, վերահսկողական վարքի եւ հաւանաբար նաեւ սեռական բռնութեան ամենամեծ մասը բաժին է ընկնում մտերիմ զուգընկերոջը[16]: Ինչ վերաբերւում է մանկամահացութեանն, ապա այս ցուցանիշով ՀՀն հիմնականում իրագործել է սահմանուած թիրախը: Վերջին տասը տարիներին երեխաների ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ եւ խոզուկ)[17] պատուաստումները կազմել են ընդհանուր թուի 97%ից աւելին: ՀՀ առողջապահութեան նախարարութեան տուեալների համաձայն, մանկամահացութեան մակարդակը դեռ զիջում է ԵՄ երկրներին:

Միւս թիրախը՝ մայրական առողջութեան բարելաւումն ամբողջովին յաջողուել է ապահովել բարձրորակ բուժանձնակազմով ծնունդների եւ նախածննդեան բուժօգնութեան տրամադրման առումներով: Մասնաւորապէս, 2004-14ին 100,000 նորածնի մայրերի մահացութեան ցուցանիշը կրճատուել է 26.7ից՝ 18.6ի եւ կարիք ունի յետագայ նուազման: Տնտեսական դիւանագիտութեան դերն այս առումով ենթադրում է այլ պետութիւնների հետ արդիւնաւէտ գործակցութիւն, արտերկրում ՀՀից համապատասխան մասնագէտների վերապատրաստման կազմակերպում, միջազգային գործընկերութեան միջոցով առողջապահական ծառայութիւնների մատուցման բարձր որակի ապահովման աջակցութիւն, ինչպէս նաեւ բուժծառայութիւն մատուցողների եւ ծնողների միջեւ հաղորդակցման մեծացմանն ուղղուած միջոցառումներ, ծնողներին անհրաժեշտ գիտելիքների փոխանցում-իրազեկում, յատկապէս՝ հեռաւոր գիւղական շրջաններում[18]:

Միւս մարտահրաւէրը ՄԻԱՎ/ՁԻԱՀի, մալարիայի եւ այլ հիւանդութիւնների դէմ պայքարն է, որը եւս կարելի է արդիւնաւէտ գնահատել. կա-

տարուել են սահմանուած վեց ցուցանիշից երեքը, իսկ միւսների մասով գրանցուել է առաջընթաց, որը պայմանաւորուած է նրանով, որ բոլոր ՄԻԱՎ վարակակիրներին հնարաւորութիւն է ընձեռնուել օգտագործել *հակառետրովիրուսային* դեղեր, թոքախտով վարարակիրները բուժուել են անմիջական հսկողութեամբ իրականացուող բուժմամբ, մալարիայի գծով Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը ՀՀն ճանաչել է յիշեալ հիւանդութիւնից զերծ տարածք[19]: Միւս կողմից, թոքախտով դէպքեր դեռ գրանցւում են, իսկ ՄԻԱՎ վարակակիրների թիւը 15-24 եւ բարձր տարիքի անձանց շրջանում բարձր է նաեւ այդ հիւանդութեան մասին գիտելիքների անբաւարար մակարդակի պատճառով (բնակչութեան իրազեկուածութեան մակարդակը 22.4% է, ՄԻԱՎի դէպքերի 67.3%ը գրանցուել է բնակչութեան առաւել վտանգուած խմբերի շրջանակից դուրս):

ՁԻԱՀի եւ թոքախտի հակազդման ուղղութեամբ ծախսերը նուազել են կիսով, իսկ այդ հիւանդութիւնների առողջապահական կենտրոններն աւելի հզօրացնելու փոխարէն, միաւորել են: Վերջին տասնամեակում յիշեալ հիւանդութիւնների գծով վարարակիրների թիւը մեծացել է, ինչը պայմանաւորուած է նաեւ արտագնայ աշխատանքով զբաղուողների բարձր շարժունակութեամբ եւ էժան աշխատուժ գնահատուող այլ երկրի քաղաքացիների՝ ՀՀ ժամանելու համեմատաբար բարձր հոսքերով, որոնք հիւանդութեան հիմնական ներբերողներն են (շուրջ 75%): Պետութեան, մասնաւորապէս, տնտեսական դիւանագիտութեան դերն է ուսումնասիրել աշխատանքային գաղթի նոր միտումները եւ իրազեկել, որ դրա մակարդակն ապագայում չի նուազելու: Ուրեմն, ՄԻԱՎ եւ այլ վարակների կրճատման նպատակով պէտք է ձեռնարկել վաղաժամ ախտորոշում, կանխարգելիչ գործողութիւններ՝ իրազեկուածութեան եւ գիտելիքների բարձրացում բնակչութեան առաւել վտանգուած եւ այլ խմբերի համար, ՄԻԱՎի յայտնաբերման դէպքում կատարել հետազօտութիւններ եւ պահանջուող մասնագիտական խորհրդատուութիւն: Տնտեսական դիւանագիտութեան աջակցութիւնը կարող է դրսեւորուել փոխանցուող վարակի, ներառեալ 2020ին գլուխ բարձրացրած COVID-19ի գծով արտերկրի առողջապահական կենտրոնների հետ գործակցութեան հարթակների ապահովումը, դրանց յաղթահարման համար բուժծառայութիւնների մակարդակի բարձրացումը, բնակչութեան բոլոր, յատկապէս՝ խոցելի խմբերի իրազեկուածութեան բարձրացումը, հաղորդակցութեան ձեւերի բարելաւումը, միջազգային արդիւնաւէտ փորձի տեղայնացմանն աջակցութիւնը եւն.: Սա

պէտք է ձեւակերպուի որպէս խնդիր արտերկրում գործող ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւնների համար՝ համագործակցելու միջազգային կազմակերպութիւնների, արտերկրի առողջապահական հաստատութիւնների, Սփիւռքում բնակուող բժիշկների եւ բժիշկների տարբեր միաւորումների հետ եւ աջակցելու համավարակի յաղթահարմանը:

Տնտեսական դիւանագիտութեան գործիքակազմի օգտագործման անհրաժեշտութիւնն առկայ է շրջակայ միջավայրի անվտանգութեան ասպարէզում, քանի որ իրականում այս ոլորտի մարտահրաւէրները չեն սահմանափակւում մէկ երկրի տարածքում տարուող աշխատանքներով եւ հարեւանների հետ ջանքերի համադրման կարիք է զգացւում: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ բազմաթիւ խնդիրներ մնում են չլուծուած, թէեւ ՀՀն 16 թիրախներից 9ի գծով շօշափելի առաջընթաց է արձանագրել.- 1) յատուկ պահպանուող տարածքների մակերեսի աճ (մինչեւ ընդհանուր տարածքի 13%ը), 2) Սեւանայ լճի մակարդակի բարձրացում աւելի քան չորս մետրով եւ լճի ջրային աղբիւրների մաքրութեան բարելաւում, 3) կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում. 2012-15՝ կառուցուել է վեց կայան, 4) քաղաքային եւ գիւղական շրջանների բնակչութեան ջրամատակարարման բարելաւում. 17ժամեայ ջրամատակարարում Երեւանից դուրս գտնուող քաղաքային եւ գիւղական շրջանների տնային տնտեսութիւնների համար (2005ին այդ ցուցանիշը կազմել է 7.4 ժամ):

Վերջին տասնհինգ տարիներին ՀՀ անտառների տարածքը կրճատուել է 11.2%ից 9%ի, ինչը շարունակուելու միտում ունի, եթէ չձեռնարկուեն համարժէք բնապահպանական միջոցառումներ: Ներկայումս երկրի բնակչութեան մօտ մէկ երրորդը զրկուած է բարեկարգ կոյուղուց օգտուելու հնարաւորութիւնից[20]: Մեր մասնակցութեամբ մշակուած ՀՀ 2014-25ի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում ամրագրուած է, որ «*տնտեսական աճի բարձր տեմպերին միտուած ՀՀ կառավարութեան ջանքերի հետ միասին հնարաւորինս նուազեցուեն բնապահպանական տեսանկիւնից առաջացող ռիսկերը*»[21], նշուած են զգուշացումներ բնապահպանական հետեւեալ վտանգների վերաբերեալ. Հանքարդիւնաբերութեան ոլորտի ընդլայնում, ապօրինի անտառահատումներ, ջրային աղբիւրների գերշահագործումը՝ պայմանաւորուած ստորերկրեայ ջրային աղբիւրներ օգտագործող ենթաճիւղերի արագ զարգացմամբ եւ կլիմայի փոփոխութեամբ եւ անապատացման վտանգի աճ: Բնապահպանական սպառնալիքները նշուածով չեն սահմանափակւում եւ պահանջում են

յատուկ ուշադրութիւն. Սեւանայ լճի վիճակի կառավարում (այդ թւում՝ դրա բուսական ու կենդանական աշխարհը եւ ջրի որակը՝ լուծուած թթուածնի պարունակութիւնից զատ), անտառների արդիւնաւէտ մշտադիտարկում ու կառավարում, կենսաբանական բազմազանութեան մշտադիտարկում ու կառավարում, յատուկ պահպանուող տարածքների մշտադիտարկում ու կառավարում, բնապահպանական կանոնների մշտադիտարկում ու կենսագործում, ջրերի եւ հողերի մշտադիտարկում ու մաքրում, յատկապէս՝ հանքարդիւնաբերական ոլորտի ձեռնարկութիւններ ունեցող համայնքներում, ինչպէս նաեւ սխալ գիւղատնտեսական մեթոդների պատճառով վատթարացած հողակտորներում, արդիւնաբերական աղտոտուածութիւնը ու կոշտ թափօնների կառավարումը եւ միջավայրի վերաբերեալ կրթութեան ու իրազեկութեան բարձրացման յատուկ շեշտադրումը: Կառավարութեան կողմից ընդունուած, բայց չիրագործուած Հեռանկարային Զարգացման Ծրագրում ներառուած են նաեւ օրէնսդրական բարեփոխումներ, տնօրինման եւ կառավարման կարողութիւնների բարձրացում (այդ թւում՝ յատուկ պահպանուող տարածքների, անտառների եւ ջրային աւազանների պարագայում), բնապահպանական վճարների դրոյքաչափերի բարձրացում, Սեւանայ լճում աշխատանքների շարունակութիւն, «կանաչ» նորարարական մօտեցումների խթանման իրաւական կառուցակարգերի ստեղծում եւ կրթութեան եւ իրազեկութեան բարձրացում: Տնտեսական դիւանագիտութեան խնդիրն այս պարագայում պետութեան, գործարար շրջանակների եւ այլ շահառուների, շահագրգիռ կողմերի հետ հետեւողական աշխատանքն է, այս հարցերում միջազգային կազմակերպութիւնների ներգրաւուածութեան ապահովումը, նպատակների իրագործման համար անհրաժեշտ ներդրումների խթանումը:

Վերջապէս, տնտեսական դիւանագիտութեան ներգրաւուածութեան առումով առաւել կարեւորւում է այնպիսի էական մարտահրաւէր եւ նպատակ, ինչպիսին է արդէն քննարկուած նախորդ նպատակների իրագործման շուրջ միջազգային գործակցութեան ծաւալումը: Մասնաւորապէս, կարեւոր է տեղեկատուութեան եւ հաղորդակցման արհեստամիջոցների հասանելիութեան ապահովումը համակարգիչների օգտագործման, բջջային հեռախօսների ծառայութիւններին բաժանորդագրութեան եւ համացանցի օգտագործման մասով, ինչը մեծ մասամբ արդիւնաւէտ է իրականացուել ՀՀում: Միւս կողմից, թէեւ, մեր դիտարկմամբ, վերջին տարիներին ՀՀն որոշ չափով բարելաւել էր կառավարման որակը, ժողո-

վրդավարական հաստատութիւնները եւ խօսքի ազատութիւնը, մտահոգիչ է անարդիւնաւէտ աշխատանքը՝ մամուլի ազատութեան, կառավարութեան արդիւնաւէտութեան, դրա հաշուետուութեան, կարգաւորման որակի եւ օրէնքի գերակայութեան, փտախտի վերահսկողութեան ու ընկալման առումներով:

Ակնյայտ է, որ յիշեալ ցուցանիշերը ոչ միայն ՀՀ տնտեսութեան, ժողովրդավարութեան եւ ներքին խնդիրներին են առնչւում, այլեւ արտաքին յարաբերութիւններին, եւ, ընդհանուր առմամբ, երկրի միջազգային հեղինակութեանն ու վարկանիշին: Հետեւաբար, տնտեսական դիւանագիտութեան թիրախներում կարեւոր է ներառել քաղաքացիական հասարակութեան զարգացման, ազգային տնտեսութեան մրցունակութեան եւ տնտեսական անվտանգութեան հարցերը:

Տնտեսական մարտահրաւէրների վնասազերծման տեսանկիւնից կարեւոր է ուսումնասիրել, թէ ինչպէս կարելի է օգտագործել տնտեսական աղբիւրներն ու դրանց շուրջ ձեւաւորուող յարաբերութիւններն՝ ուսումնասիրելու հնարաւոր հակամարտութեան եւ առեւտրի խաթարմանն առնչուող ծախսերն, ինչպէս նաեւ համագործակցային առաւելութիւններն իրացնելու, մասնաւորապէս, քաղաքական կայուն յարաբերութիւններ ձեւաւորելու եւ տնտեսական անվտանգութեան մակարդակը բարձրացնելու նպատակով: Պատմութիւնը վկայում է, որ արդիւնաւէտ են յատկապէս ժողովրդավարութեան միջոցով Եւրոպայի նախկին մենատիրական կառավարման համակարգ ունեցող երկրներում համատեղ ջանքերով անվտանգութեան միասնական համակարգի ձեւաւորման օրինակները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ժամանակակից պայմաններում տնտեսական մարտահրաւէրները տակաւ աճում են եւ դրանց դէմ պայքարում կիրառուող գործիքակազմը կարիք ունի որոշակի տարբերակայնացման: Ընդհանուր առմամբ, միջազգային անվտանգութեան պարագայում պարզ է դառնում, որ տնտեսական դիւանագիտութիւնը կենսունակ դեր ունի եւ կարող է ապահովել վտանգների կառավարման համակարգ՝ կարեւորագոյն միջազգային իրավիճակներում: Ասուածը վկայում է այն մասին, որ տնտեսական դիւանագիտութեան բոլոր գործիքները նպաստում եւ բարձրացնում են տնտեսական անվտանգութիւնը՝ տարբեր տնտեսական խնդիրների լուծման բաղադրատոմսերի հիման վրայ, որը հաշուի է առնում առկայ եւ

նոր յայտնաբերուած գործօններն ու դերակատարներին: Յաջող եւ արդիւնաւէտ տնտեսական դիւանագիտութիւնը կառուցում է տնտեսական անվտանգութիւնն աւելի ամուր եւ ընդարձակ երկկողմ տնտեսական յարաբերութիւններով, հանրային եւ մասնաւոր հատուածի հետ գործակցութեամբ, ինչպէս նաեւ հանդէս գալով որպէս յուսալի խարիսխ փոխադարձ հետաքրքրութիւնների եւ օգուտների իրացման համար:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Maria Bolocan, *Marshall Plan from Conception to Reality*, Ovidius University Press, 2016 (https://www.ceeol.com/search/article-detail?id=510265):

[2] Report of the World Food Summit, FAO, http://www.fao.org/3/w3548e/w3548e00.htm :

[3] «ՀԶՆ Առաջընթացի Ազգային Զեկոյց», http://www.un.am/hy/p/mdgs-and-armenia :

[4] «ՄԱԿի Հազարամեակի Նպատակները» www.un.org :

[5] "Sustainable Development Goals," https://www.millennium-institute.org :

[6] "Post-Brexit Guide: Where Are We Now – and How Did We Get Here?" https://www.euronews.com/2020/02/11/brexit-draft-deal-first-of-many-hurdles-to-a-smooth-exit :

[7] *Աղքատութեան Պատկերը Հայաստանում 2008-2016թթ., Վիճակագրական Ժողովածու* (https://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf):

[8] Նոյն:

[9] «Հայաստանում Աղքատ է 700.000 Մարդ», https://www.azatutyun.am/a/30315718.html :

[10] «Աղքատութեան Պատկերը»:

[11] «ՀԶՆ Առաջընթացի Ազգային Զեկոյց»:

[12] «Աղքատութեան Պատկերը»:

[13] Նոյն:

[14] www.armstat.am :

[15] «Նորածինների Սեռերի Անհամամասնութիւնը Հայաստանում. Ժողովրդագրական Տուեալներ եւ Վերլուծութիւն», http://unfpa.am/sites/default/files/Sex_Imbalance_report_Eng_final-with%20cover-final.pdf :

[16] «Հայաստանում ՄԱԿ-ի Բնակչութեան Հիմնադրամի «Ընդդէմ Գենդերային Բռնութեան», http://unfpa.am/sites/default/files/DV_survey_eng.pdf:

[17] https://www.unicef.org/armenia/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%8

2%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A1%D5%BD%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7%D5%9D-%D5%B9%D5%B6%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%80-%D5%AE%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7

[18] «ՀՀՆ Առաջընթացի»:

[19] Նոյն:

[20] Նոյն:

[21] *Հայաստանի Հանրապետության 2014-2025 Թուականների Հեռանկարային Զարգացման Ռազմավարական Ծրագիր* (www.gov.am , էջ 167):

THE REPUBLIC OF ARMENIA: DEFUSING ECONOMIC CHALLENGES BY MEANS OF ECONOMIC DIPLOMACY

(Summary)

TATUL MANASERYAN
tatoulm@gmail.com

The paper focuses on the role economic diplomacy can play in defusing tension and threats, which hinder and endanger the well-being and development of humankind and may lead to new armed conflicts and isolation and menace peace and security.

Against the backdrop of the economic concerns and challenges of the Republic of Armenia and how the country has resolved them, the author argues that efforts should be based on international principles which can be applied to local cases. In this regard the author sees world challenges, regional threats and national priorities as interconnected issues. Such an approach enables one to delineate an agenda of economic diplomacy on both the local and international levels and establish interstate cooperation within the framework of international agencies.

The author stresses that diverse current challenges should be differentiated and addressed through different world structures, means and modes. He concludes that these realities would invest economic diplomacy with dynamism and provide it with the vital role of producing risk-managing governance in tense international conditions. This would prove that economic diplomacy promotes economic security according to different recipes for different economic challenges bearing in mind new factors and actors.

The author concludes that in order to be perceived as a solid anchor and reference for mutual interests and benefits, successful and effective economic diplomacy should construct economic security on the basis of stronger and broader interstate economic relations in collaboration with both the public and private sector.